ЗКМ
4-68

3202

1919

2010

68

ԱԿՋՈՒԹԻՒՆ „ԵՐՐՈՐԴ ԻՆՏԷՐՆԱՑԻՈՆԱԼ“ № 5.

ЗКП
Ч-68

ՊՐՈԼԷՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ—ՄԻԱՑԷՔ!

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԷՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՄԱՆԻՖԵՍՏԸ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐԻՆ

ԳԻՆՆ Է ՄԷԿ ՐՈՒԲԼԻ

20011

ЗКП
Ч-68

ԹԻՖԼԻՍ
Տպարան «ԳՐՈԳՐԵՍ», Լ. Գողոսեանի. Լօրէս-Մելիքեան փողոց № 1.
1919

7768-ակ

6943·57

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՄԱՆԻՖԵՍՏԸ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐԻՆ

Եօթանասուն և երկու տարի սրանից առաջ Կոմմունիստական կուսակցութիւնը առաջարկեց աշխարհին իր ծրագիրը—Մանիֆեստի ձևով, գրած պրոլետարական յեղափոխութեան մեծագոյն աւետողներ Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Էնգելսի ձեռքով։ Հէնց այդ ժամանակ, կոմմունիզմը, որ հազիւ հազ դեռ նոր էր դուրս եկել կուի ասպարէզ, տիրող դասակարգերի կողմից ենթարկւեց հալածանքի, թունաւորման, ատելութեան ու կեղծիքների, որովհետև տիրող դասակարգերը իրաւացիօրէն նախազգացին կոմմունիզմի մէջ իրանց մահացու թշնամուն։ Իր $^3/_4$ դարու զարգացման ընթացքում կոմմունիզմը գնացել է բարդ ճանապարհներով. նա բուռն ոգևորութեան հետ ունեցել է և անկման շրջաններ, յաջողութիւնների հետ կրել է և խիստ պարտութիւններ, սակայն իր շարժման հիմքում նա դրել է Կոմմունիստական կուսակցութեան Մանիֆեստի նախագծած ուղին՝ որով և ընթացել է։ Վերջին վճռական պայքարի ժամը աւելի ուշ հասաւ, քան այդ սպասում և յոյս էին տածում սոցիալիստական յեղափոխութեան առաքեալները։ Բայց նա անխուսափելիօրէն հասաւ։

Մենք, կոմմունիստներս, զանազան երկրների՝ Եւրոպայի, Ամերիկայի և Ասիայի յեղափոխական պրոլետարիատի ներկայացուցիչներս, հաւաքւելով Խորհրդային Մոսկվայում, զգում ենք և գիտակցում, որ մենք յաջորդներն ու կատարողներն ենք այն գործի, որի ծրագիրը որոշած է 72 տարի սրանից առաջ։ Մեր խնդիրը կայանում է նրանում, որ բանւոր դասակարգի յեղափոխական փորձը ընդհանրացնենք, մաքրենք յեղափոխական շարժումը օպպորտունիստական դաւադիր խառնուրդից և սոցիալ-պատրիոտիզմից, միացնենք համաշխարհային պրոլետարիատի, իսկական յեղափոխական բոլոր կուսակցութիւնների ջանքերը և դրանով դիւրացնենք ու արագացնենք կոմմունիստական յեղափոխութեան յաղթանակը բովանդակ աշխարհում։

Այժմ, երբ Եւրոպան ծածկւած է ծխացող աւերակների կոյտերով, մեծագոյն հրձիգները զրաղւած են պատերազմի մեղաւորներին փնտռելով։ Նրանց յետևից ձգում են իրանց ծառաների

շարքերը, որպիսիք են—բանակցութիւններ վարող պրոֆիսօրներ, ժուրնալիստներ, սոցիալ-պատրիոտներ և բուրժուազիայի պնակալեզ այլ պաշտպաններ։

Մի շարք տարիների ընթացքում, սոցիալիզմը նախագուշակել է իմպերիալիստական պատերազմի անխուսափելիութիւնը, տեսել է նրա մեղաւորներին կապիտալիստական երկրների երկու բանակի ունեւոր դասերի անկշռում անձնական շահամոլութեան մէջ։

Երկու տարի առաջ, նախ քան պատերազմի պայթելը, բոլոր երկրների սոցիալիստական պատասխանատու ղեկավարները բազմի կօնդրեսում մերկացնում էին իմպիրիալիզմը, որպէս մեղաւոր՝ դալիք պատերազմի և սպառնում էին բուրժուազիայի դէմ պայթեցնել սոցիալիստական յեղափոխութիւնը, որպէս պրոլետարական պահանջ և հատուցում պատերազմական ոճրագործութեան։ Այժմ, հինգ տարուայ փորձից յետոյ, երբ պատմութիւնը երեան հանեց Գերմանիայի գիշատիչ ախորժակը, բաց է անում նոյնպէս դաշնակիցների ոչ պակաս յանցագործութիւնները։ Համաձայնութեան երկրների պետական սոցիալիստները հետեւելով իրանց կառավարութիւններին շարունակում են փնտռել պատերազմի մեղաւորին յանձինս գերմանական գահընկեց կայսրի։ Այդ դեռ բաւական չէ. գերմանական սոցիալ-պատրիոտները, որոնք 1914 թւի օգոստոսին Հոհենցօլլերնի դիպլոմատիկական «Սպիտակ գիրքը» յայտարարեցին սրբազան աւետարան բոլոր ժողովրդների, այժմ հետեւելով Համաձայնութեան սոցիալիստներին, ստոր քծնանքով մեղադրում են գերմանական տապալած միապետութիւնը, որին նրանք ստրկօրէն ծառայում էին, որպէս պատերազմի գլխաւոր մեղաւորի։ Այդ ճանապարհով նրանք յոյս ունին, թէ կըստիպեն մոռանալ իրանց սեփական դերը և միաժամանակ կարժանանան յաղթողների բարեացակամութեանը։ Գահընկեց եղած Ռօմանովների, Հոհենցօլլերների, Հաբսբուրգների և այդ երկրների կապիտալի ծառաների ու նրանց կատարած դերերի հետ հանդէս է գալիս նաև Ֆրանսիայի, Իտալիայի, Անգլիայի և Միացեալ Նահանգների ղեկավար շրջանների անչափ ոճրագործ դերը բոլոր դէպքերի նկատմամբ, հանդերձ դիպլոմատական մերկացումներով։

Անգլիական դիպլոմատիան մինչև պատերազմի բռնկման վերջին րոպէն չըզցեց իրանից խորհրդաւորութեան քողը։

Սիտիի կառավարութիւնը երկիւղ էր կրում, որ եթէ ինքը կատեգորիկ կերպով յայտարարէ թէ մասնակցում է պատերազմին և Համաձայնութեան կողմն է, Բելգիան կարող էր նահանջել և—պատերազմը չէր լինի։ Լօնդօնում պատերազմ էին ցանկանում։ Այդ պատճառով նա իրան այնպէս էր պահում, որ Բելգիանում ու Վիեննայում յոյս էին տածում Անգլիայի չեզոքութեան վրայ այն ժամանակ, երբ Փարիզում ու Պետրոգրադում յամառ կերպով պնդում և հաշուի էին առնում նրա մասնակցութիւնը։

Տասնեակ տարիների ատոմական զարգացմամբ պատրաստուած պատերազմը արձակուեց շղթաներից Մեծ Բրիտանիայի ուղղակի և գիտակցուած պրովոկացիայով։ Վերջինիս կառավարութիւնը այս բանն անելով հաշուի էր առնում այն հանգամանքը, որ օգնէ Ռուսաստանին և Ֆրանսիային այնքան ժամանակ, որ սրանց ուժասպառ անելով, վերջնականապէս կործանէ իր մանացու թշնամի Գերմանիային։ Սակայն Գերմանիայի հզօր ռազմական ոյժը աւելի ահեղ դուրս եկաւ և հարկաւորուեց Անգլիայի ոչ թէ ձեւական, այլ իրական մասնակցութիւնը պատերազմին։ Ծիծաղող երրորդի դերը, որ ըստ հնաւանդ սովորութեան Մեծ Բրիտանիայինը պիտի լինէր, այս անգամ վիճակուեց Միացեալ Նահանգներին։

Վիլսօնի կառավարութիւնը աւելի դիւրութեամբ հաշուեց անգլիական բլօկադայի հետ, որը միակողմանի կերպով արգելում էր Եւրոպական արեան վրայ հիմնուած ամերիկեան բիրժայի սպեկուլացիան, սպեկուլացիա—որ Համաձայնութեան երկրները այնպէս առատաձեռն ապառուցանում էին ամերիկեան բուրժուազիային «միջազգային օրէնքի» խախտումը։ Սակայն Գերմանիայի հսկայական ռազմական կարողութիւնը այնուամենայնիւ ստիպեց Վաշինգտօնի կառավարութեանը դուրս գալ իր կեղծ չեզոքութիւնից։ Միացեալ Նահանգները իրանց վրայ վերցրին Եւրոպայի նկատմամբ այն դերը, որը անցեալ պատերազմների ժամանակ յանձն էր առնում, և այժմ էլ մի վերջին անգամ փորձեց յանձն առնել Անգլիան. այն է՝ թուլացնել պատերազմը վարողներից մէկը—միւսի օգտին, խառնուել պատերազմական գործողութիւններին այն չափով, որ իր օգուտները և դրութիւնը ապահովի։ Վիլսօնի խաղը—ставка-ն ամերիկեան վիճակախաղի մեթոդների համաձայն, այնքան էլ մեծ չէր, բայց որովհետև նա վերջինն էր, ուստի և տանելը (выигрыш) ապահովեց։

Կապիտալիստական կարգերի հակասութիւնները պատերազմի շնորհիւ մարդկութեան առաջ կանգնեցին որպէս ֆիզիքական չարչարանքներ, որպիսիք են—սովը, ցուրտը, տարափոխիկ հիւանդութիւնները և բարքերի վայրենացումները։ Սրանով անվճռաբեկ որոշուում է սոցիալիզմի մէջ դոյութիւն ունեցող ակադեմիական վէճը, աղքատացման և կապիտալիզմից աստիճանաբար սոցիալիզմին անցնելու թէորիան։ Վիճակագիրները և հակասութիւնների թուլացման թէորիայի պեղանները, տասնեակ տարիների ընթացքում աշխարհի ամեն անկիւններում հնարում էին զանազան իրական և մտացածին փաստեր, որոնք վկայում էին բանւոր դասակարգի առանձին խմբակցութիւնների և կատեգորիաների բարեկեցութեան բարձրացումը։ Մասսաների աղքատացման թէորիան համարւում էր թաղած բուրժուական կաֆեդրայի ներքինիների սուլոցների տակ և սոցիալիստական օպորտունիզմի մանդարինների կողմից։ Իսկ այժմ այդ ոչ միայն սոցիալական, այլև ընտանեական ու կենսաբանական, աղքատացումը կանգնած է մեր առաջ իր սառստեցուցիչ իրականութեամբ։

Իմպերիալիստական պատերազմը մաքուր սրբել է պրոֆեսիոնալ և պարլամենտական բոլոր նուաճումները։ Մինչդեռ այս պատերազմը սնել է կապիտալիզմի ներքին տենդենցներից այն չափով, ինչ չափով որ տնտեսական հիմնարկութիւնները և պարլամենտական կոմպրոմիսները, որոնց նա թաղել է արեան ու ցեխի մէջ։

Ֆինանսական կապիտալը մարդկութեանը գցելով պատերազմի գիրկը, ինքը կատաստրոֆիկ փոփոխութեան ենթարկուեց այս պատերազմի ընթացքում։ Դրամանիշների (ден. знак) կախումը և փոխ յարաբերութիւնը արտադրութեան նիւթական արժէքների նկատմամբ վերջնականապէս խախտուեց։ Աւելի ու աւելի կորցնելով իրանց նշանակութիւնը որպէս միջոց կապիտալիստական ապրանքների շրջանառութեան, թղթադրամները եղան ռեկվիզիցիայի գործիք, ենթարկուեցին յափշտակման և առհասարակ դարձան ռազմա-տնտեսական բռնաբարման առարկայ։

Թղթադրամների վերափոխումը կապիտալիստական ապրանքների փոխանակութեան վրայ մահացու կրիզիսի պէս է ազդում։ Եթէ ազատ մրցումը որպէս արտադրութեան և բաշխման ղեկավար, դուրս էր շպրտում տնտեսութեան գլխաւոր շրջաններից

մոնոպոլիայի և տրեստների ուժով դեռ պատերազմի նախորդ տասնեակ տարիների ընթացքում, ապա պատերազմի ընթացքում այդ ղեկավարող ուղղութիւն տուողի դերը պարզուեց, որ խլուած է տնտեսական միութիւնների ձեռքից և տրուած ռազմապետական իշխանութեան ձեռքը։ Հում նիւթերի բաժանումը Բաքուի կամ Ռումինիայի նաւթի օգտագործումը, Դոնի շրջանի քարածուխի, Ուկրայինայի հացի, գերմանական շոգեմեքենաների, աւտոմոբիլների, սովամահ լինող Եւրոպային հացով ու մսով ապահովելու խնդիրը,—բոլոր այս հիմնական համաշխարհային տնտեսական հարցերը չեն լուծուում ոչ ազատ մրցմամբ, ոչ էլ ազգային կամ միջազգային տրեստներով ու կոմբինացիաներով կամ կոնսորցիումներով, այլ անմիջական զինուորական ոյժի բռնութեամբ, յանուն նրա ապագայ գոյութեան։ Եթէ ամբողջ պետական իշխանութեան ֆինանսական կապիտալին ենթարկելը մարդկութեանը հասցրեց իմպերիալիստական սպանդանոցին, ապա ուրեմն՝ այդ սպանդանոցի միջոցով ֆինանսական կապիտալը մինչև վերջը ռազմականացրեց ոչ միայն պետութիւնը, այլև ինքն իրան և արդէն անընդունակ է իրագործելու իր հիմնական տնտեսական ֆունկցիաները ոչ այլ կերպ քան երկաթի և արեան միջոցով։

Օպորտունիստները, որոնք մինչև պատերազմը կոչ էին անում բանւորներին լինել չափաւոր-յանուն աստիճանաբար սոցիալիզմին անցնելու, որոնք պատերազմի ժամանակ պահանջում էին դասակարգային անդորրութիւն յանուն ազգային ինքնապաշտպանութեան գործի, այժմ նորից պահանջում են պրոլետարիատից ինքնուրացում—այս անգամ արդէն նպատակ դնելով վերացնելու պատերազմի սարսափներից առաջացած հետևանքները։ Եթէ այս քարոզը ընդունէր բանւորական մասսաների կողմից, կապիտալիստական զարգացումը կը վերականգնուէր մի քանի սերունդների ոսկորների վրայ և նոր, աւելի կենդրոնացած ու ապշեցուցիչ ձևերով, անխուսափելի համաշխարհային պատերազմի նոր հեռանկարով։ Բարեբախտաբար մարդկութեան համար այդ անկարելի է։

Տնտեսական կեանքի պետականացումը, որի դէմ այնպէս ուժեղ կերպով բողոքեց կապիտալիստական լիբերալիզմը—իրական փաստ դարձաւ։ Այս փաստից դէպի յետ, ոչ միայն դէպի

ազատ մրցութիւն այլև արհեստների, սինդիկատների և այլ անտեսական սպրուտների տիրապետութիւնը—այլևս վերադարձ չը կայ։ Հարցը կայանում է այժմ նրանում, թէ ով պէտք է յետագայում տանի պետականացրած արդիւնաբերութիւնը. իմպերիալիստական պետութիւնը թէ յաղթական պրոլետարիատի իշխանութիւնը։ Ուրիշ խօսքով—ամբողջ աշխատաւոր մարդկութիւնը կը դառնայ արդեօք հարկատու ստրուկ համաշխարհային յաղթական վոհմակի որը «Ժողովրդների Լիգա» ֆիրմայի տակ «ինտերնացիոնալիստական» բանակի և «ինտերնացիոնալիստական» նաւատորմի օգնութեամբ կը կողոպտի ու կը խեղդի մէկին, կերակրելով միւսներին, ամենուրեք պրոլետարիատի վրայ բարդելով ծանրութիւնը-ունենալով մի նպատակ, այն է՝ պաշտպանել իր սեփական իշխանութիւնը. թէ ամբողջ Եւրոպայի և ուրիշ առաջաւոր երկրների ու ամբողջ աշխարհի զանազան մասերի բանւոր դասակարգը կը տիրանայ քայքայւած ու կործանւած տնտեսութեանը, որպէսզի ապահովի նրա վերածնումը սոցիալիստական հիմունքներով։

Այս ներկայ կրիզիսի շրջանը կարելի է կարճել միմիայն պրոլետարիատի դիկտատուրայի միջոցով, որը ուշադրութիւն չը դարձնելով անցեալի վրայ, հաշուի չի առնում ոչ ժառանգական առաւելութիւնները, ոչ սեփականատիրական իրաւունքները, ելակէտ է ընդունում սովամահ լինող մասսաներին ազատելու պահանջները, այդ նպատակի համար մոբիլիզացիայի է ենթարկում բոլոր ոյժերն ու միջոցները, մտցնում է ընդհանուր պարտադիր աշխատանքի սկզբունքը, սահմանում է աշխատանքի դիսցիպլինա, որպէսզի դրանով ոչ միայն մի քանի տարւայ ընթացքում բժշկէ պատերազմի հարւածներից առաջացած խոր վերքերը, այլև բարձրացնէ մարդկութեանը նոր, դեռևս չեղած բարձունքները։

Ազգային պետութիւնը, որ կապիտալիստական զարգացման ուժեղ խթանն է եղել, այժմ շատ նեղ ու սեղմ է դարձել արտադրական ոյժերի զարգացման համար։ Առաւել ևս ծանր վիճակում են դտնւում ժամանակ պետութիւնները որոնք խեղդւում են Եւրոպայի և ուրիշ երկրների բռնակալութիւնների մէջ։ Այդ ժամանակ պետութիւնները, որոնք ծնունդ են առել զանազան ժամանակներում, որպէս ժամանակ հաւաւածներ, որպէս մանր փող, որ վճարւում է զանազան ծառայութիւնների համար, որպէս ռազմական բուֆերներ, ունեն իրանց դինաստիաները, իրանց

ղեկավարող վոհմակները, իրանց նեղողական ձգտումներն ու դիպլոմատական խարդախութիւնները։ Նրանց ուրւականային անկախութիւնը մինչև պատերազմը պահպանւում էր այն հիման վրայ ինչի վրայ որ պահւում էր Եւրոպայի հաւասարակշռութիւնը. այն է՝ —երկու նեղողական բանակի անընդմիջող փոխադարձ ատելութեան։ Պատերազմը խախտեց այդ հաւասարակշռութիւնը։ Նախ՝ տալով հսկայական առաւելութիւն Գերմանիային, նա ստիպեց մանր պետութիւններին իրանց փրկութիւնը փնտռել գերմանական միլիտարիզմի մեծահոգութեան մէջ։ Բայց Գերմանիայի ջախջախելուց յետոյ, մանր պետութիւնների բուրժուազիան իրանց հայրենասէր «սոցիալիստների» հետ միասին շուտ գալով զիմաւորեցին դաշնակիցների յաղթական իմպերիալիզմին և Վիլսոնեան կեղծ ու պատիր ծրագրի կէտերի մէջ փնտռեցին իրանց անկախ գոյութեան երաշխիքները։ Սրա հետ միասին մանր պետութիւնների թիւը բազմացաւ։ Աւստրո-Հունգարական միապետութիւնից, ցարական կայսրութիւնից բաժանւեցին նոր պետութիւնները, որոնք դեռ հազիւ ծնունդ առած իրար կոկորդից են բռնել պետութեան սահմանների պատճառով։ Իսկ այդ միջոցին դաշնակից իմպերիալիստները զանազան մանր պետութիւնների կոմբինացիաներ են սարքում թէ հների և թէ նորերի մէջ, որպէսզի շրջապատեն նրանց ատելութեան և ընդհանուր թուլութեան երաշխիքով։

Ճնշելով ու հարստահարելով մանր ու թոյլ ազգերը, ժառանգելով նրանց սովի ու ստորացման, դաշնակից իմպերիալիստները, ճիշտ այնպէս—ինչպէս կենդրոնական կայսրութիւնների ինպերիալիստները—չեն դադարում խօսել ազգերի իրաւունքների և ինքնորոշման մասին, որոնք այժմ ոտնահարւած են վերջնականապէս Եւրոպայում և աշխարհի ուրիշ մասերում։

Փոքր ազգերին ազատելով և ազատ կեանքի հնարութիւններ ստեղծել կարող է միմիայն պրոլետարական յեղափոխութիւնը, որը կազատէ արտադրական ոյժերը բոլոր երկրների ազգային պետութիւնների սեղմոն ճանկերից—միացնելով ժողովուրդները սեղմ տնտեսական աշխատակցութեամբ, ընդհանուր տնտեսական ծրագրի հիմքով և հնարաւորութիւն կը տայ ամենաթոյլ ու փոքրաթիւ ժողովրդին կառավարելու իր ազգային-կուլտուրական գործերը առանց վնաս պատճառելու միացեալ, կենդրոնացած համաշխարհային, եւրոպական տնտեսութեանը։

Վերջին պատերազմը, որ առաջացաւ գաղութների պատճառով, միաժամանակ հանդէս եկաւ այդ նոյն գաղութների ազատագրութեամբ։ Դեռ ևս չտեսնուած չափերով – գաղութների ազատագրութիւնը դրաւեցին Եւրոպական պատերազմով։ Ինդուսները, նեգրերը, արաբները, մալայցիք—Եւրոպական տերիտորիայի վրայ կուռում էին յանուն ինչի... յանուն իրանց իրաւունքների, շարունակելու գերի մնալ Անգլիայի ու Ֆրանսիայի։ Երբէք կապիտալիստական պետութեան անազնիւ պատկերը գաղութներում այսքան պարզ ու որոշ չէ եղել և իրական ստրկութեան պրոլետարիատի այնպիսի սրութեամբ չէ եղել դրուած, ինչպէս այժմ։

Այստեղից ծնունդ են առնում մի շարք բացարձակ ապստամբութիւններ և յեղափոխական խմորումներ բոլոր գաղութներում։ Եւրոպայի ներսում—Իրլանդիան յիշեցնում էր փողոցների արիւնահեղ ընդհարման միջոցին, որ նա դեռ ևս մնում է և զգում, որ ինքը ստրկացած երկիր է։ Մաղդասկարում, Անամում և ուրիշ տեղեր բուրժուական հանրապետութիւնների զօրքերը, պատերազմի ընթացքում շատ անգամ են խաղաղացրել ապստամբած գաղութային ստրուկներին։ Հնդկաստանում յեղափոխական շարժումը չէ դադարել և ոչ մի օր, իսկ վերջին ժամանակներս վերածուեց ասիական յուժկու բանուորական գործադուլի, որին Մեծ Բրիտանական կառավարութիւնը պատասխանեց զրահապատ աւտոմոբիլների գործողութեամբ Բոմբէայում։

Այսպիսով, գաղութային հարցը իր ամբողջութեամբ կանգնած է ոչ միայն Փարիզի դիպլոմատական կոնգրեսի քարտէզի վրայ, այլև գաղութների մէջ։ Վիլսոնի ծրագիրը նպատակ ունի լաւագոյն դէպքում փոփոխել գաղութային ստրկութեան էտիկետը։ Գաղութների ազատագրումը միաք ունի միայն այն դէպքում, երբ կազատուի բանուոր դասակարգը մետրոպոլիայից։ Գիւղացիներն ու բանուորները ոչ միայն Անամայի, Ալժիրի, Բենգալիայի, այլև Պարսկաստանի ու Հայաստանի հնարաւորութիւն կը ստանան անկախ ապրելու միայն այն ժամին, երբ Անգլիայի ու Ֆրանսիայի բանուորները կը շպրտեն իրանց Լլոյդ-Ջորջին ու Կլեմանսոյին և իրանց ձեռքը կառնեն պետական իշխանութիւնը։ Աւելի զարգացած գաղութներում այժմ պայքարը ընթանում է ոչ թէ ազգային ազատագրման դրօշի տակ, այլ միանգամից կրում է աւելի կամ պակաս չափով սոցիալական վառ բնոյթ։ Եթէ կապիտալիստական Եւրոպան բռնի կերպով ներս է քաշել յետ ընկած երկրամասերը կապիտալիստական յարաբերութիւնների ջրադարձի մէջ, ապա սոցիալիստական Եւրոպան ազատագրուած գաղութներին կը դայ օգնութեան իր տեխնիկայով, կազմակերպութիւններով, գաղափարական ազդեցութեամբ, որպէսզի արագացնի ընթացքը դէպի համաչափ կազմակերպուած սոցիալիստական տնտեսութիւնը։

*

Ամբողջ բուրժուական աշխարհը կոմունիստներին մեղադրում է դեմոկրատիայի քաղաքական ազատութիւնը ոչնչացնելու մէջ։ Այդ բանը ճիշտ չէ։ Իշխանութիւնը վերցնելով իր ձեռքը, պրոլետարիատը ձգտում է անկախ կերպով փոխել բուրժուական դեմոկրատիայի մեթոդները և ստեղծել նոր պայմաններ ու ձևեր աւելի բարձր դեմոկրատիայի, այն է՝ բանուորական դեմոկրատիայի։

Կապիտալիստական զարգացման ընթացքը, մասնաւորապէս վերջին իմպերիալիստական պատերազմի շրջանում, բաժանեց քաղաքական դեմոկրատիային ոչ միայն նրանով, որ բաժան բաժան արեց նրան երկու հակառակ ու անհաշտ մասի, այլև նրանով, որ մատնեց նրան տնտեսական սառեցման և քաղաքական ուժաթափման, և այս զրութիւնը ենթարկեցին ոչ միայն մանր բուրժուական և պրոլետարական խաւերը, այլև ընչաղուրկ պրոլետարիատի աւելի ստորին մասը։

Այն երկրամասերի բանուորական դասակարգը, որտեղ պատմական զարգացումը նրան հնարաւորութիւն էր տուել, օգտագործեց քաղաքական դեմոկրատիայի ռեժիմը իր կազմակերպութիւնների համար—ընդդէմ կապիտալի։ Այս նոյն բանը կը կատարուի յետագայում այն շրջաններում, որտեղ դեռ ևս հաստատուած չեն բանուորական յեղափոխութեան պայմանները։ Սակայն մասնաւորի լայն խաւերը, ոչ միայն գիւղերում, այլև քաղաքներում կապիտալիզմի շնորհիւ զսպւում են, յետ մնալով պատմական զարգացումից ամբողջ դարերշրջաններ։

Բաւարական և Բադենի գիւղացին դեռ ևս շատ ամուր կպած իր գիւղական զանգակատանը, ֆրանսական մանր գինեգործը գինու խոշոր կապիտալիստական ֆալսիֆիկացիայից քայքայուած, ամերիկական մանր ֆերմերը խաբուած ու վիրաւորուած բանկիրներից ու պատգամաւորներից, սրանք ամենքը շնորհիւ կապիտալիզմի սոցիալական խաւերի զարգացման մեծ ճանապարհից շեղուած քաղաքական դեմոկրատիայի ռեժիմի՝ կոչուած են, թղթի

վրայ—կառավարելու պետութիւնը։ Սակայն իրական կեանքում բոլոր հիմնական հարցերը, որոնք ժողովրդի բախտն են որոշում, ֆինանսական օլիգարխիան պարլամենտական դեմոկրատիայի թիկունքում իր վճիռներն է կայացնում։

Այսպէս էր նախ և առաջ պատերազմի հարցում, այսպէս է և այժմ խաղաղութեան խնդրում։ Այն չափով, որքան ֆինանսական օլիգարխիան պարզաբանելու իր հարստահարող քաղաքականութիւնը, դեռ իրան ծանրաբեռնում է պարլամենտական քէչարկութեամբ, անհրաժեշտ հետևանքների, հասնելու համար բուրժուական պետութեան տրամադրութեան տակ հանդէս են բերում բոլոր միջոցները, որպիսիք են—կեղծիք, ամբոխավարութիւն, բամբասանք, թունաւորում, կաշառք ու տերրոր, որոնք ժառանգութիւն են անցեալ դարերի դասակարգային ստրկութեան, բազմապատկած կապիտալիստական տեխնիկայի բոլոր հրաշալիքներով։

Պահանջել պրոլետարիատից, որ նա իր վերջին ոչ թէ կեանքի այլ մահուան օրհասական կռուի ընթացքում կապիտալի հետ պահպանէ քաղաքական դեմոկրատիայի պահանջած պատուարժանութիւնը—այդ կընշանակի պահանջել մի մարդուց, որը պաշտպանում է իր կեանքը աւազակներից, պահպանել ֆրանսական կոնբոնուկի բոլոր արհեստական և պայմանական օրէնքները, որոնք սահմանուած են իր հակառակորդի կողմից և հէնց նրա կողմից էլ չեն պահպանւում։

Կործանման թագաւորութեան մէջ, ուր ոչ միայն արտադրութեան միջոցներն ու տրանսպորտը, այլև քաղաքական դեմոկրատիայի հիմնարկութիւնները իրանցից ներկայացնում են արիւնոտ աւերակների կոյտեր, պրոլետարիատը ստիպւած է ստեղծելու իր սեփական ապարատը, որ պիտի ծառայէ նախ և առաջ բանւոր դասակարգի ներքին կապը պահպանելուն, և ապահովի նրա յեղափոխական մասնակցութեան պայմանները։

Այդ ապարատները Խորհուրդներն են։

Հին կուսակցութիւնները, հին պրոֆեսիոնալ միութիւնների կազմակերպութիւնները է՛ էմ իրանց ղեկավարների—ցոյց տուին, որ անընդունակ են ոչ միայն վճռելու, այլ նոյնիսկ հասկանալու այն խնդիրները, որ առաջարկում է նոր դարեշրջանը։ Պրոլետարիատը ստեղծեց նոր տիպի կազմակերպութիւններ, լայն ընդգրկելով բանւորական մասսաները անկախ նրանց պրոֆեսիայից և քաղաքական հասունութիւնից. այդ ապարատը

ճկուն է, անընդհատ նորոգւելու ընդունակ և առաձգական, որը կարող է իր մէջ ընդունել միշտ նոր ու նոր խաւեր, միշտ պատրաստ դուռը լայն բանալու թէ մօտիկ պրոլետարիատին և թէ քաղաքի ու գիւղի հեռու աշխատաւոր խաւերին։ Այս անփոխարինելի կազմակերպութիւնը, յետագայ կռուի համար ստեղծած ինքնավարութիւնը, որը ապագայում իր ձեռքն է ձգելու պետական իշխանութիւնը, փորձած ու փորձւած է զանազան երկրներում և ամենակարողն է որպէս գործիք մեր դարի պրոլետարիատի համար։

Բոլոր այն երկրներում ուր աշխատաւոր մասսան ապրում է գիտակցական կեանքով, կազմակերպւում են այժմ և պիտի յետագայում էլ կազմակերպւեն բանւորական, զինւորական և գիւղացիական Խորհուրդներ։ Ամրապնդել Խորհուրդները, բարձրացնել նրանց հեղինակութիւնը, հակադրել նրանց բուրժուական պետական ապարատին—այս է ահա բոլոր երկրների գիտակից ու շիտակ բանւորների կարևորագոյն խնդիրը։ Խորհուրդների միջոցով բանւոր դասակարգը ընդունակ է ազատելու իրան կազմալուծելուց, որը մտցնում են նրան ներսը պատերազմի դժոխային տանջանքները՝ սովը, ունևորների ճնշումը և նախկին ղեկավարների դաւաճանութիւնը։ Խորհուրդների միջոցով բանւոր դասակարգը հաստատապէս և հեշտութեամբ կարող է իշխանութիւնն առնել իր ձեռքը այն երկրներում, ուր խորհուրդները կը հաւաքեն ու կը կենդրոնացնեն իրանց շուրջը աշխատաւորութեան մեծամասնութիւնը։ Խորհուրդների միջոցով իշխանութիւնը դրաւած բանւոր դասակարգը կը ղեկավարէ երկրի տնտեսական ու կուլտուրական կեանքը իր բոլոր շրջաններով, ինչ որ կատարւում է ներկայումս Ռուսաստանում։

Իմպերիալիստական պետութեան կործանումը—սկսած ցարականից մինչև «դեմոկրատականը»—ընդունում է միաժամանակ իմպերիալիստական զինւորական սիստեմի կործանման հետ։ Բազմամիլիոն զօրքը իմպերիալիզմից մոբիլիզացիայի ենթարկւած՝ կարող էր կայուն մնալ այնքան ժամանակ, քանի պրոլետարիատը գտնւում էր բուրժուազիայի լծի տակ։ Ազգային միութեան խորտակումը, նշանակում է անխուսափելի խորտակումը զօրքի։ Այսպէս եղաւ նախ Ռուսաստանում և ապա Գերմանիայում ու Աւստրիայում։ Նոյն բանն է սպասւում նաև միւս իմպերիալիստական երկրներում։

Գիւղացիութեան շարժումը ընդդէմ հողատէրերի, բանւորութեանը՝ ընդդէմ կապիտալիստների և այս երկսինը՝ ընդդէմ միապետական կամ «դեմոկրատական» բիւրոկրատիայի, անխուսա-

փելիօրէն կը տանի իր յետևից և զինուորներին ընդդէմ իրանց հրամանատարների, իսկ յետագայում նաև անջատում կը գցի զօրքի մէջ գտնուող պրոլետարական և բուրժուական էլէմէնտների մէջ։ Իմպերիալիստական պատերազմը որ հակադրել էր ազգութիւնը—ազգութեան, փոխուել և փոխուում է քաղաքացիական կռուի, հակադրելով դասակարգը ընդդէմ դասակարգի։

Բուրժուական աշխարհի հեծեծանքները ընդդէմ քաղաքացիական կռուի և կարմիր տերրորի, ներկայացնում է իրանից մի նշանակալից կեղծիք, որ յայտնի է քաղաքական կռուի պատմութեանը։ Քաղաքացիական կռիւ չէր լինի, եթէ շահագործողների վոհմակները, որոնք մարդկութեանը հասցրին անդունդի ծայրը, չը դիմադրէին աշխատաւորութեան ամէն մի առաջ գնացող քայլին, եթէ չըկազմակերպէին դաւադրութիւններ ու ապանութիւններ և դրսի զինուորական օգնութեանը չը դիմէին իրանց յափշտակիչ իրաւունքների ու առաւելութիւնների վերականգման համար։

Քաղաքացիական կռիւը բանւոր դասակարգի վզին է փաթաթուում նրա մահացու թշնամիների կողմից։ Հրաժարուելով իրանից և իր ապագայից, որը ամբողջ մարդկութեան ապագան է, բանւոր դասակարգը չէ կարող հարուածին հարուածով չը պատասխանել։

Երբէք արհեստական, շինծու քաղաքացիական կռիւ չառաջացնելով՝ կոմմունիստական կուսակցութիւնը ձգտում է հնար եղածին չափ կարճել նրա երկարատևութիւնը, իսկ եթէ նա կուռ անհրաժեշտութեամբ ծագում է, ապա քչացնել զոհերի թիւը և ամենից առաջ ապահովել պրոլետարիատի յաղթանակը։ Սրանից հետևում է այն անհրաժեշտութիւնը, որ իր ժամանակին զինաթափի բուրժուազիան և զինի բանւորութիւնը—կոմմունիստական զօրք կազմելու համար, որը կըպաշտպանի պրոլետարիատին և անձեռնմխելի կը պահի նրա սոցիալիստական շինարար աշխատանքը։ Այսպիսին է ահա Խորհրդային Ռուսաստանի կարմիր բանակը, որը ծնել ու ապրում է բանւոր դասակարգի նուաճումները արտաքին և ներքին յարձակումներից պաշտպանելու համար։ Խորհրդային կարմիր բանակը անբաժանելի է Խորհրդային իշխանութիւնից։

Գիտակցելով իրանց խնդրի համաշխարհային բնոյթը, առաջաւոր բանւորները կազմակերպած սոցիալիստական շարժման առաջին քայլերից սկսած ձգտել են ժողովուրդների միութեան։ Այս բանի սկիզբը դրել է Լոնդոնում 1864 թ-ին Առաջին Ինտերնացիոնալի ժամանակ։ Ֆրանս-պրուսական պատերազմը որից ստեղծուեց Հոհենցոլլերների Գերմանիան, տակից կորեց առաջին Ինտերնացիոնալը, միաժամանակ խթան տալով ազգային բանւորական կուսակցութիւնների զարգացման։ Այդ կուսակցութիւնները 1889 թ-ի Փարիզի համագումարում միանում և կազմակերպում են II-րդ Ինտերնացիոնալը։ Բայց բանւորական շարժման ծանրութեան կենտրոնը այն ժամանակամիջոցում ամբողջովին հենուում էր ազգային հողի վրայ—ազգային պետութիւնների շրջանակներում, ազգային արդիւնաբերութեան հիմնաւորումով և ազգային պարլամենտարիզմի շրջանում։ Տասը տարուայ կազմակերպած ու բարենորոգած աշխատանքը, տուեց զեկավարների մի ամբողջ սերունդ, որոնք խօսքով, մեծամասնութեամբ ընդունում էին իրանց ծրագրում սոցիալական յեղափոխութիւնը, բայց գործով հրաժարուում էին նրանից, ցեխոտելով ըէֆորմիզմից, հնազանդութեամբ յարմարուում էին բուրժուական պետութեանը։ Զեկավար կուսակցութիւնների յարմարուող բնոյթը պահպանուեց մինչև վերջ և հասցրեց համաշխարհային պատմութեանը յայտնի կրախին այն ժամանակ, երբ պատմական դէպքերի ընթացքը պահանջում էր բանւոր դասակարգի կուսակցութիւններից յեղափոխական կուսակցութիւններ։ Եթէ 1870 թ-ականի պատերազմը հարուածեց I-ին Ինտերնացիոնալին, երևան հանելով որ նրա սոցիալ-յեղափոխական ծրագիրը չունի իր ետևից դեռ ևս կազմակերպած մասսա, ապա 1914 թ-ի պատերազմը սպանեց II-րդ Ինտերնացիոնալը, գտնելով որ նրա հզօր բանւորական մասսաների կազմակերպութիւնների տակ կանգնած են կուսակցութիւններ, որոնք դարձել են բուրժուական պետութիւնների ենթակայ օրգաններ։

*

Այս բանը վերաբերում է ոչ միայն սոցիալ-պատրիոտներին, որոնք այժմ ավ-աշկարայ բուրժուական բանակն անցած դարձել են նրա սիրահարուած լիազօրներն ու հաւատարմատարները, որոնք բանւոր դասակարգի համար աւելի յուսալի դահիճներն, այլև երերուն ու տատանուող կենդրոնի հոսանքին, որը ձգտում է վերականգնել II-րդ Ինտերնացիոնալը՝ այսինքն սահմանափակ օպորտունիզմ և զեկավար շրջանների յեղափոխական անկարողութիւնը։ Գերմանական անկախ կուսակցութիւնը, Ֆրանսիայի ներկայ սոցիալիստական մեծամասնութիւն կազմող կուսակցութիւնները, Ռուսաստանի մենշևիկական խմբակը, Անգլիայի

Անկախ բանտորական կուսակցութիւնը և յարանման խմբակներ փաստօրէն ձգտում են բռնելու այն տեղը, որը մինչև պատերազմը բռնում էին II-րդ Ինտէրնացիօնալի պաշտօնական կուսակցութիւնները, կոմպրոմիսի ու համաձայնութեան գաղափարներով, և ամեն միջոցներով կաշկանդելով պրոլետարիատի էներգիան, ձգձգեցին կրիզիսը և դրանով խորացրին Եւրոպայի աղքատութիւնը։ Սոցիալիստական կենդրոնի դէմ կռիւ մղելը, անհրաժեշտ պայմանն է իմպերիալիզմի դէմ մղուող կռիւի յաջողութեան։

Դէն շպրտելով իրանց դարն ապրած պաշտօնական սոցիալիստական կուսակցութիւնների թերութիւնը, կեղծիքն ու փտածութիւնը, մենք—կոմունիստներս միացած III-րդ Ինտէրնացիօնալում գտնում ենք, որ մենք ուղղակի շարունակողներն ենք այն հերոսական ջանքերի ու չարչարանքների, որոնք կատարուել են երկար շարք յեղափոխական սերունդների ձեռքով, սկսած Բաբեոֆից մինչև Կարլ Լիբկնեխտն ու Ռոզա Լիւքսէնբուրգը։

Եթէ առաջին Ինտէրնացիօնալը նախագուշակեց ապագայ զարգացումը և որոշեց նրա ուղիները, եթէ երկրորդ Ինտէրնացիօնալը հաւաքեց ու կազմակերպեց միլիոնաւոր պրոլետարիատը, ապա Երրորդ Ինտէրնացիօնալը հանդէս է գալիս յեղափոխութեան իրագործման մասսայական բաց գործողութիւնների։

Սոցիալիստական քննադատութիւնը բաւականին մարակել է արդէն բուրժուական իրաւարկարգը։ Միջազգային կոմունիստական կուսակցութեան խնդիրը կայանում է նրանում, որ նա տապալի այդ իրաւակարգը և նրա տեղ կանգնեցնի սոցիալիստական կարգի շէնքը։ Մենք կոչ ենք անում բոլոր երկրների բանտորներին ու բանտորուհիներին՝ միանալ ու խմբուել կոմունիստական դրօշի շուրջը, որը արդէն առաջին մեծ յաղթանակների դրօշակն է։

Պրոլետարներ բոլոր երկրների—ընդդէմ իմպերիալիստական բարբարոսութեան, ընդդէմ միապետութեան, արտօնեալ դասերի ընդդէմ բուրժուական պետութեան և սե[illegible]Շեան, ընդդէմ բոլոր ձևի ու տիպի դասակարգային [illegible] ազգային հարբուսահարութիւնների—միացէք։

Բանտորական Խորհուրդների դրօշակի տակ, իշխանութեան համար մղուող յեղափոխական կռիւի ու պրոլետարիատի դիկտատուրայի, Երրորդ Ինտերնացիօնալի դրօշի տակ—պրոլետարներ բոլոր երկրների, միացէ՛ք։

2013

<< Ազգային գրադարան

NL0036742